ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.12.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/96

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ

Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 01.12.2020թ.),

Ա.Պարանյանի (լիազորագիր՝ տրված 01.12.2020թ.),

Տ.Ներսիսյանի (լիազորագիր՝ տրված 01.12.2020թ.),

քննելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից 30.11.2020թ. ներկայացված (01.12.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/96 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 30.11.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2020թ. նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1 կետով՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը.

«1-ից 17-րդ տողերում բացակայում է արտադրողի և մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել 1.1 կետով նշված մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները /մինչև 23.11.2020թ. ներառյալ/:

Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է անհամապատասխանությունը:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.11.2020թ. նիստի թիվ 2-4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից շտկումից հետո ներկայացված Հավելված 1.1-ի 1-ից 3-րդ տողերով պահանջվող կանալային օդափոխիչների փոխարեն մասնակիցը ներկայացրել է կանալային օդարակիչների ներքին բլոկ:

Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է «ԱՐՏԿՈՆ» ՓԲԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտերը գնահատել անբավարար և մերժվել:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ են տրվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների բազմաթիվ խախտումներ, մասնավորապես.

Ինչպես արդեն նշել էինք, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթ:

Վերոհիշյալ Ընթացակարգին մասնակցության նպատակով հայտ է ներկայացրել նաև «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ:

Համաձայն «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 20.11.2020թ. նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1 կետի՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող տեխնիկական բնութագիր Հավելված 1.1-ը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Նույն արձանագրությամբ որոշում է կայացվել նիստը կասեցնել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 23.11.2020թ. ներառյալ կատարել համապատասխան շտկում:

Գնահատող հանձնաժողովի 24.11.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2-4 արձանագրության համաձայն՝ Պատվիրատուի կողմից ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմքով, թե իբր՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից շտկումից հետո ներկայացված Հավելված 1.1-ի 1-ից 3-րդ տողերով պահանջվող կանալային օդափոխիչների փոխարեն մասնակիցը ներկայացրել է կանալային օդարակիչների ներքին բլոկ:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ գնահատող հանձնաժողովի կողմից չեն պահպանվել շտկման ծանուցման և արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունների բովանդակության նկատմամբ ներկայացվող գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Մասնավորապես ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետը իմպերատիվ պահանջում է, որ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվեն հայտնաբերված անհամապատասխանությունները:

Նույն որոշման 43-րդ կետն էլ պահանջում է, որ հայտերի բացման և գնահատման արձանագորթյան մեջ մանրամասն նկարագրվեն արձանագրված անհամապատաս-խանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:

Մինչդեռ թիվ 2-3 արձանագորության ուսումնասիրությունը ուղղակիորեն հետևում է, որ այստեղ ընդամենը վերացական նշվել է, որ 1-ից 17-րդ տողերում բացակայում է արտադրողի և մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը և առաջարկվել է կատարել համապատասխան շտկում: Բայց, թե ինչ շտկում է ակնկալում, այդպես էլ մնում է անհայտ: Ավելին, մասնակցի կողմից շտկում կատարելուց հետո այս անգամ էլ որպես հայտը մերժելու հիմք նշվել է, որ Հավելված 1.1-ի 1-ից 3-րդ տողերով պահանջվող

կանալային օդափոխիչների փոխարեն մասնակիցը ներկայացրել է կանալային օդորակիչների ներքին բլոկ:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ նաև, որ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին չի ուղարկվել անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ պատշաճ ծանուցում, այլ փոխարենը ուղարկվել է արձանագրություն թիվ 2-3-ը: Այլ կերպ ասած, եթե անգամ ստացած լիներ շտկում կատարելու վերաբերյալ ծանուցումը կամ տեղեկանար անհամապատասխանության մասին ոչ պատշաճ արձանագրությունից, ապա նման բովանդակություն արձանագրությունից անհասկանալի կմնար, թե ի վերջո ինչ անհամապատասխանություն է առկա, որ չափաբաժնի մասով և ինչ պետք է շտկվի: Բացի այդ, պատշաճ ծանուցման մեջ կնշվեր, թե որ էլ. հասցեին պետք է ուղարկվեր շտկված Հավելված 1.1-ը:

Սրանով գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41 և 43 կետերի պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովը խախտել ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, “Գնումների մասին” ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 34-րդ հոդվածի 1-ին մասի, Կարգի 43 կետերի պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Ի լրումն վերը շարադրված բողոքի՝ 07.12.2020թ. Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից 30.11.2020թ. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանին ներկայացված թիվ ԳԲՔԱ-

ՆԳ-2020/96 ծածկագրով բողոքը, որի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ լրացուցիչ նկատառումները.

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը.

«1-ից 17-րդ տողերում բացակայում է արտադրողի և մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել 1.1 կետով նշված մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ ինչը Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է:

Սակայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.11.2020թ. նիստի թիվ 2-4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից շտկումից հետո ներկայացված Հավելված 1.1-ի 1-ից 3-րդ տողերով պահանջվող կանալային օդափոխիչների փոխարեն մասնակիցը ներկայացրել է կանալային օդարակիչների ներքին բլոկ:

Հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Եվ այսպես, թիվ 2-3 արձանագորության ուսումնասիրությունը ուղղակիորեն հետևում է, որ այստեղ ընդամենը նշվել է, որ 1-ից 17-րդ տողերում բացակայում է արտադրողի և մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը և առաջարկվել է կատարել համապատասխան շտկում: Բայց, թե ինչ շտկում է ակնկալում, այդպես էլ մնում է անհայտ: Ավելին, մասնակցի կողմից շտկում կատարելուց հետո այս անգամ էլ որպես հայտը մերժելու հիմք նշվել է, որ Հավելված 1.1-ի 1-ից 3-րդ տողերով պահանջվող կանալային օդափոխիչների փոխարեն մասնակիցը ներկայացրել է կանալային օդարակիչների ներքին բլոկ:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքը, ըստ արտադրող ընկերության պաշտոնական կայքի տեղեկատվության, հանդիսանում է կանալային օդափոխիչ, ըստ համապատասխան հղման՝ http://www.mitsubishielectric.com.ua/pead-rp-jalq.html: Որպես ապացույց կցվում է նաև համապատասխան էջի արտատպումը:

Բացի այդ, պետք է փաստել, որ Ընթացակարգի հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը պետք է ՏԵՂԱԴՐԻ կանալային օդափոխիչ, և ըստ էության, Հրավերում ոչ մի

տեղ նշված չէ, թե այդ օդափոխիչը պետք է մատակարարվի ՍՊԸ-ի կողմից, թե տրամադրվի Պատվիրատուի կողմից:

Ավելին, Ընթացակարգի հրավերում բացակայում է որևէ պահանջ, որ Ընկերությունը պարտավոր է նշել կանալային օդափոխիչների արտադրողի և մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը, որ էլ հիմք կարող էր հանդիսանալ մասնակցի հայտը մերժելու համար»:

Այնուհետև՝ 15.12.2020թ. ներկայացված թիվ 2 լրացմամբ Ընկերությունը հայտնել է հետևյալը.

«Ինչպես արդեն հայտնել ենք՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթում արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը.

«1-ից 17-րդ տողերում բացակայում է արտադրողի և մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը:

Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել 1.1 կետով նշված մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ ինչը Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.11.2020թ. նիստի թիվ 2-4 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից շտկումից հետո ներկայացված Հավելված 1.1-ի 1-ից 3-րդ տողերով պահանջվող կանալային օդափոխիչների փոխարեն մասնակիցը ներկայացրել է կանալային օդարակիչների ներքին բլոկ:

Բողոքներ քննող անձին այս կապակցությամբ խնդրում ենք նկատի ունենալ մի քանի շատ կարևոր հանգամանք.

Նախ, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից շտկումից հետո ներկայացված Հավելված 1.1-ում 1-ից 3-րդ տողերով պահանջվող կանալային օդափոխիչների համար հստակ և ամբողջությամբ ամրագրվել են Ընթացակարգի հրավերի տվյալ ապրանքի համար նախատեսված տեխնիկական բնութագիրը: Այլ կերպ ասած, ՍՊԸ-ի կողմից 1-ից 3-րդ տողերով առաջարկվել են այնպիսի ապրանքատեսակ, որի համար նշվել են Ընթացակարգի Հրավերի բոլոր տեխնիկական պարամետրերը: Պատվիրատուն ենթադրություն է արել, որ նշված ապրանքը հանդիսանում է կանալային օդափոխիչների փոխարեն՝ կանալային օդարակիչների ներքին բլոկ, միայն հիմք ընդունելով առաջարկված ապրանքատեսակի մոդելը: Մինչդեռ, իր կողմից տրված Հավալեված 1.1-ով

ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխանող կանալային օդափոխիչ, այլ ոչ թե կանալային օդարակիչների ներքին բլոկ և նշել Հրավերի տեխնիկական բնութագրի բոլոր համապատասխան պարամետրերը: Գտնում ենք, որ նման պայմաններում, երբ ՍՊԸ-ի ներկայացրած Հավելված 1.1. բովանդակությունը ամբողջությամբ և տառացիորեն կրկնում է Հրավերի տեքստը, Պատվիրատուն չէր կարող ամրագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախատում և այդ հիմքով մերժեր մասնակցի հայտը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ մինչև ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կոմիտեի հայտարարված «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելը՝ «Կոնսէլ» ՍՊԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի միջև ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար՝ ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի շրջանակներում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին պահանջի դեպքում կտրամադրվի մրցույթով նախատեսված կանալային օդափոխիչներ՝ մրցույթի համապատասխան տեխնիկական պարամետրերով: Բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ «Կոնսէլ» ՍՊԸ-ն հանդիսանում է Mitsubishi Electric պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում և ներմուծում է Mitsubishi Electric օդակարգավորման և օդափոխման տարբեր համակարգեր:

Ինչ վերաբերում է օդակարգավորման և օդափոխման համակարգերի կոնկրետ մոդելների, ապա տեղեկացնում ենք, որ օդակարգավորման և օդափոխման կոնկրետ համակարգի մակնիշավորումը կարող է իրականացվել անհատապես՝ հատուկ պատվերի դեպքում պահանջված ապրանքը անհատական մակնիշավորելու արդյունքում:

Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև այն կարևոր հանգամանքի վրա, որ նույն պատվիրատուի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/13» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավեված 1.1-ով որպես կանալային օդափոխիչներ առաջարկվել են նաև այս մրցուկթի շրջանակներում առաջարկված Mitsubishi Electric նույն մոդելի կանալային օդափոխիչները և գնահատող հնաձնաժողովը չի գտել, որ նշված մոդելը ոչ թե կանալային օդափոխիչ է, այլ՝ կանալային օդարակիչների

ներքին բլոկ (համապատասխան ապացույցը կցվում է): Նման պայմաններում ավելի քան անհասկանալի է, որ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/13» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտը գնահատվում է հրավերի պահանջներին բավարարող, իսկ մեկ այլ՝ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթի արդյունքում նույն պատվիրատուն գտնում է, որ առաջարկվող մոդելը կանալային օդարակիչ չէ, այլ դրա ներքին բլոկն է»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.12.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 04.12.2020թ. թիվ 02/16.4/9086-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կից ուղարկում եմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 22-ին հայտարարված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած «Գևորգյան և Ներսիսյան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված բողոքին առնչվող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

Հայտնում եմ, որ Պատվիրատուի կողմից պահպանվել են գնումների գործող օրենսդրությամբ սահմանված բոլոր պարտադիր պահանջները և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ Ընկերության տվյալները համապատասխան հիմքերով 2020 թվականի դեկտեմբերի 1-ի N 02/16.4/9006-2020 գրությամբ ուղարկվել են լիազորված մարմին:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները բաժնում նշված ոչ պատշաճ ծանուցման մասով տեղեկացնում եմ, որ Կարգի 41-րդ և 43-րդ կետերի համաձայն՝

գնահատող հանձնաժողովի չորս անդամի կողմից հաստատված արձանագրության մեջ մանրամասն նկարագրված են եղել բոլոր անհամապատասխանությունները, դրանց շտկման ժամկետները և այն ուղարկվել է Ընկերության էլեկտրոնային փոստի հասցեին:

Ինչ վերաբերում է շտկումն ուղարկելու համար էլեկտրոնային փոստի հասցեն նշված չլինելու հարցին, տեղեկացնում եմ, որ Ընկերության կողմից անհամապատասխանությունների մի մասը շտկվել և ուղարկվել են այն էլեկտրոնային փոստի հասցեին, որի մասին Ընկերությունն իբրև թե տեղյակ չի եղել»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 04.12.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/96 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/96 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն:
2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2020թ. թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1.1-ի 1-17-րդ տողերում բացակայում է մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը:
3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, որոշում է կայացրել նիստը կասեցնելու և Ընկերությանը ծանուցելու վերաբերյալ՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 23.11.2020թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 20.11.2020թ. Armeps էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) ոչ ավտոմատ ծանուցման եղանակով «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին ուղարկել է ծանուցում՝ հետևյալ բովանդակությամբ. «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների մասին», և կցել թիվ 2-3 արձանագրությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.11.2020թ. թիվ 2-4 արձանագրության համաձայն՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից շտկումից հետո ներկայացված Հավելված 1.1-ի 1-9-րդ տողերով պահանջվող կանալային օդափոխիչների փոխարեն մասնակիցը ներկայացրել է կանալային օդորակիչների ներքին բլոկ:

6. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

<u>4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի 30.11.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 04.12.2020թ. թիվ 02/16.4/9086-2020 գրությամբ հայտնած դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ ***եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: <u>Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է,</u>*** ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպես՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Արևիկ համայնքում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման

աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ով՝ սարքերի և սարքավորումների նկարագրով, սահմանվել է հետևյալը.

N	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ Оборудование, предусмотренное проектно-сметной документацией	Չ.մ	Единица измерения	Քանակ Кол-во	Նախագծողի կոմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ /տարի/ Минимальный гарантийный срок, установленный Проектировщиком /год/	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում /արտադրող, մոդել /առկայության դեպքում/, տեխնիկական բնութագիր/ Оборудование, предлагаемое Участником /производитель, модель /при наличии/, техн.характеристика/
1	2	3	4	5	6	7
	Օդափոխություն/вентиляция					
1	Կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=250մշ/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг	լրա կազմ	к-т	3	6 ամիս	
2	Կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=250մշ/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг	լրա կազմ	к-т	3	6 ամիս	
3	Կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=320մշ/ч, N=0.085квт, n=2600об/мин, G=3.75кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	
4	Կանալային օդափոխիչի տեղադրում/Канальный вентилятор Q=250մշ/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	
5	Կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=1080մշ/ч, N=0.2квт, n=2500об/мин, G=5.7кг, L=205мм	լրա կազմ	к-т	1	6 ամիս	
6	Կանալային օդափոխիչի տեղադրում Канальный вентилятор Q=560մշ/ч, N=0.175կվտ, n=2950об/мин, G=4.6к	լրա կազմ	к-т	1	6 ամիս	
7	Կանալային օդափոխիչի տեղադրում Канальный вентилятор Q=250մշ/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	
8	Կանալային օդափոխիչի տեղադրում Канальный вентилятор Q=560մշ/ч, N=0.175կվտ, n=2950об/мин, G=4.6кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	

9	Կանալային օդափոխիչի տեղադրում Осевой вентилятор Q=95мчш/, N=0.03квт, n=2940об/мин, G=1.0кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	
10	Օդի ներածման արտածման ռեկուպացիոն սարքավորում Q= 80/40m3/ժ N=25, n=2300պտ/ր Приточно-вытажная рекуперационная установка Q=80/40մա/ժ; N=25վտ; n=2300պտ/ր	լրա կազմ	к-т	40	2	
11	Օդի ներածման արտածման ռեկուպացիոն սարքավորում Q= 1030/40m3/ժ N=3.7, n=2720պտ/ր Приточно-вытяжная рекуперационная установка Q=1030мш/ч; N=3.7квт; n=2720об/мин	լրա կազմ	к-т	1	2	
	Տեսադիտարկման համակարգ/видеонаблюдение					
12	Թվային տեսաձայնագրիչ / Цифровой видеорегистратор H264 High Profile Compression, Full HD 1080p, Real time Recording # Playback, 480fps at 1080p# 960 fps at 960 H	լրա կազմ	к-т	1	1	
13	Գունավոր տեսախցիկ 4ՄՊք,3.6մմ, ներքին տեղադրման,գիշեր-ցերեկ / Цветная камера 4 МПиксел, 3.6мм, вн. Установки	լրա կազմ	к-т	2	1	
14	Գունավոր տեսախցիկ 4ՄՊք,3.6մմ,40մ,IP67, արտաքին տեղադրման / Цветная камера 4 МПиксел, 3.6мм, 40м, IP67, наружной установки, день-ночь	լրա կազմ	к-т	12	1	
	Կաթսաներ/котлы					
15	Կոնդենսացիոն պատի գազի կաթսաի տեղադրում/ Конденсационные настенные котлы W=40.0Квт	լրա կազմ	к-т	2	1	
16	Շրջանառության պոմպ Q=10մա/ժ H=14մ /Циркуляционный насос Q=10.0кб.м/ч; H=12.0м	լրա կազմ	к-т	2	1	
	Ֆոտովոլտային պանելների համակարգ/солнечные фото влольтовые панели					
17	Ներցանցային փոխակերպիչ, 2 ԱՀԿՈՒ-ով (MPPT), 2/2 գծային մուտքով, ՍՓ.ԱՆՎ~380/220 Վ, ՍՀ.ԱՈ՝ 1080 Վ, 20 կՎտ	լրա կազմ	к-т	1	5	
18	Միաբյուրեղային (perc տեխնոլոգիա) ֆոտովոլտային վահանակ, 120(60x2) կեսբջիջ, 5 հաղորդաձող (BB), 345 Վտ - 0,+ 3%, 1684x1002x30	լրա կազմ	к-т	60	10	
	Կահույք/ инвентарь					
19	Էլ. սալոջախ 600x600x850 մմ, N = 9,2 կՎտ, 380 Վ Плита электрическая 600x600x850 мм, N = 9,2 кВт, 380 В	լրա կազմ	к-т	2	1	

20	Սառնարանային պահարան 750x700x2010 N=0,32կվտ 220Վ, 650լ. Шкаф холодильный 750x700x2010 N=0,32квт, 220В, 650л.	լրա կազմ	к-т	1	1	
21	Լվացքի մեքենա, ավտոմատ, 15,0 կգ., 1400 պտույտ/րոպե Стиральная машина, автомат, 15,0 кг., 1400 об/мин.	լրա կազմ	к-т	2	1	

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտի Հավելված 1.1-ով ներկայացվել է սարքերի և սարքավորումների հետևյալ նկարագիրը.

N	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ Оборудование, предусмотренное проектно-сметной документацией	Չ.մ	Единица измерения	Քանակ Кол-во	Նախագծողի կոմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ /տարի/ Минимальный гарантийный срок, установленный Проектировщиком /год/	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում /արտադրող, մոդել /առկայության դեպքում/, տեխնիկական բնութագիր/ Оборудование, предлагаемое Участником /производитель, модель /при наличии/, техн.характеристика/
1	2	3	4	5	6	7
	Օդափոխություն/вентиляция					
1	Կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=250մշ/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг	լրա կազմ	к-т	3	6 ամիս	Air one, կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=250մշ/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг
2	Կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=250մշ/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг	լրա կազմ	к-т	3	6 ամիս	Air one կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=250մշ/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг
3	Կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=320մշ/ч, N=0.085квт, n=2600об/мин, G=3.75кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	Air one կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=320մշ/ч, N=0.085квт, n=2600об/мин, G=3.75кг
4	Կանալային օդափոխիչի տեղադրում/Канальный вентилятор Q=250մշ/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	Air one կանալային օդափոխիչի տեղադրում /Канальный вентилятор Q=250մշ/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг
5	Կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=1080մշ/ч, N=0.2квт, n=2500об/мин, G=5.7кг, L=205мм	լրա կազմ	к-т	1	6 ամիս	Air one կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=1080մշ/ч, N=0.2квт, n=2500об/мин, G=5.7кг, L=205мм
6	Կանալային օդափոխիչի	լրա	к-т	1	6 ամիս	Air one կանալային

	տեղադրում Канальный вентилятор Q=560мш/ч, N=0.175կվտ, n=2950об/мин, G=4.6к	կազմ				օդափոխիչի տեղադրում Канальный вентилятор Q=560мш/ч, N=0.175կվ տ , n=2950об/мин, G=4.6к
7	Կանալային օդափոխիչի տեղադրում Канальный вентилятор Q=250мш/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	Air one կանալային օդափոխիչի տեղադրում Канальный вентилятор Q=250 м ш/ ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг
8	Կանալային օդափոխիչի տեղադրում Канальный вентилятор Q=560мш/ч, N=0.175կվտ, n=2950об/мин, G=4.6кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	Air one կանալային օդափոխիչի տեղադրում Канальный вентилятор Q=560 м ш/ ч, N=0.175 կվ տ , n=2950об/мин, G=4.6кг
9	Կանալային օդափոխիչի տեղադրում Осевой вентилятор Q=95мчш/, N=0.03квт, n=2940об/мин, G=1.0кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	Air one կանալային օդափոխիչի տեղադրում Осевой вентилятор Q=95мч ш/, N=0.03квт, n=2940об/мин, G=1.0кг
10	Օդի ներածման արտածման ռեկուպացիոն սարքավորում Q= 80/40m3/ժ N=25, n=2300պտ/ր Приточно-вытажная рекуперационная установка Q=80/40մա/ժ; N=25վտ; n=2300պտ/ր	լրա կազմ	к-т	40	2	VKT օդի ներածման արտածման ռեկուպացիոն սարքավորում Q= 80/40m3/ ժ N=25, n=2300 պ տ / ր Приточно -вытажная рекуперационная установка Q=80/40 մ ա / ժ ; N=25 վ տ ; n=2300 պ տ / ր
11	Օդի ներածման արտածման ռեկուպացիոն սարքավորում Q= 1030/40m3/ժ N=3.7, n=2720պտ/ր Приточно-вытяжная рекуперационная установка Q=1030мш/ч; N=3.7квт; n=2720об/мин	լրա կազմ	к-т	1	2	VKT, օդի ներածման արտածման ռեկուպացիոն սարքավորում Q= 1030/40m3/ ժ N=3.7, n=2720 պ տ / ր Приточно -вытяжная рекуперационная установка Q=1030 м ш/ ч; N=3.7квт; n=2720об/мин
	Տեսադիտարկման համակարգ/видеонаблюдение					
12	Թվային տեսաձայնագրիչ / Цифровой видеорегистратор H264 High Profile Compression, Full HD 1080p, Real time Recording # Playback, 480fps at 1080p# 960 fps at 960 H	լրա կազմ	к-т	1	1	NIKVISION թվային տեսաձայնագրիչ/ Цифровой видеорегистратор H264 High Profile Compression, Full HD 1080p, Real time Recording # Playback, 480fps at 1080p# 960 fps at 960 H
13	Գունավոր տեսախցիկ 4ՄՊք,3.6մմ, ներքին տեղադրման,գիշեր-ցերեկ / Цветная камера 4 МПиксел,	լրա կազմ	к-т	2	1	NIKVISION գունավոր տեսաղցիկ 4 ՄՊք ,3.6 մմ, ներքին տեղադրման, գիշեր

	3.6мм, вн. Установки					- ցերեկ / Цветная камера 4 МПиксел, 3.6мм, вн. Установки
14	Գունավոր տեսախցիկ 4ՄՊք,3.6մմ,40մ,IP67, արտաքին տեղադրման / Цветная камера 4 МПиксел, 3.6мм, 40м, IP67, наружной установки, день-ночь	լրա կազմ	к-т	12	1	NIKVISION, գունավոր տեսախցիկ 4 ՄՊք, 3.6 մմ, 40 մ, IP67, արտաքին տեղադրման/ Цветная камера 4 МПиксел, 3.6мм, 40 м, IP67, наружной установки, день -ночь
	Կաթսաներ/котлы					
15	Կոնդենսացիոն պատի գազի կաթսաի տեղադրում/ Конденсационные настенные котлы W=40.0Квт	լրա կազմ	к-т	2	1	DAB Կոնդենսացիոն պատի գազի կաթսայի տեղադրում/ Конденсационные настенные котлы W=40.0Квт
16	Շրջանառության պոմպ Q=10մա/ժ H=14մ /Циркуляционный насос Q=10.0кб.м/ч; H=12.0м	լրա կազմ	к-т	2	1	DAB Շրջանառության պոմպ Q=10 մա/ ժH=14 մ/ Циркуляционный насос Q=10.0кб . м / ч; H=12.0 м
	Ֆոտովոլտային պանելների համակարգ/солнечные фото влольтовые панели					
17	Ներցանցային փոխակերպիչ, 2 ԱՀԿՈՒ-ով (MPPT), 2/2 գծային մուտքով, ՍՓ.ԱՆՎ~380/220 Վ, ՍՀ.ԱՌ-1080 Վ, 20 կՎտ	լրա կազմ	к-т	1	5	Solaron, Ներցանցային փոխակերպիչ, 2 ԱՀԿՈՒ-ով (MPPT), 2/2 գծային մուտք ով, ՍՓ. ԱՆՎ~380/220 Վ,Ս Հ. ԱՌ -1080Վ, 20կՎտ
18	Միաբյուրեղային (perc տեխնոլոգիա) ֆոտովոլտային վահանակ, 120(60x2) կեսբջիջ, 5 հաղորդաձող (BB), 345 Վտ -0,+ 3%, 1684x1002x30	լրա կազմ	к-т	60	10	Solaron, Միաբյուրեղային (perc տեխնոլոգիա) ֆոտով ոլտային վահանակ, 120 (60x2) կեսբջիջ, 5 հաղորդաձող (BB), 345 Վ տ -0,+ 3%, 1684x1002x30
	Կահույք/ инвентарь					
19	Էլ. սալոջախ 600x600x850 մմ, N = 9,2 կՎտ, 380 Վ Плита электрическая 600x600x850 мм, N = 9,2 кВт, 380 В	լրա կազմ	к-т	2	1	Gorenje, E5121W H , Էլ. սալոջախ 600 x600 x850 մմ, N = 9,2 կՎտ , 380 Վ Плита электрическая 600 x600 x850 мм, N = 9,2 кВт, 380 В
20	Սառնարանային պահարան 750x700x2010 N=0,32կվտ 220Վ, 650լ. Шкаф холодильный 750x700x2010 N=0,32квт, 220В, 650л.	լրա կազմ	к-т	1	1	LG GR-B650GLPL, Սառնարանային պահարան 750x700x2010 N=0,32կվտ 220Վ, 650լ. Шкаф холодильный 750x700x2010 N=0, 32квт, 220В, 650
21	Լվացքի մեքենա, ավտոմատ, 15,0 կգ., 1400 պտույտ/րոպե	լրա կազմ	к-т	2	1	Beko WTV8612XSW, Լվացքի

	Стиральная машина, автомат, 15,0 кг., 1400 об/мин.					մեքենա, ավտոմատ, 15,0 կգ., 1400 պտույտ/րոպե Стиральная машина, автомат, 15,0 кг., 1400 об/мин

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.11.2020թ. թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ***<u>Հավելված 1.1-ի 1-17-րդ տողերում բացակայում է մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը:</u>***

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետի պահանջները, որոշում է կայացրել նիստը կասեցնելու և Ընկերությանը ծանուցելու վերաբերյալ՝ առաջարկելով 1 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 23.11.2020թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 20.11.2020թ. Համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ին ուղարկել է ծանուցում՝ հետևյալ բովանդակությամբ. «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների մասին», և կցել թիվ 2-3 արձանագրությունը:

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից շտկված Հավելված 1.1-ով ներկայացվել է սարքերի և սարքավորումների հետևյալ նկարագիրը.

N	Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված սարքավորումներ Оборудование, предусмотренное проектно-сметной документацией	Չ.մ	Единица измерения	Քանակ Кол-во	Նախագծողի կոմից սահմանված նվազագույն երաշխիքային ժամկետ /տարի/ Минимальный гарантийный срок, установленный Проектировщиком /год/	Մասնակցի կողմից առաջարկվող սարքավորում /արտադրող, մոդել /առկայության դեպքում/, տեխնիկական բնութագիր/ Оборудование, предлагаемое Участником /производитель, модель /при наличии/, техн.характеристика/
1	2	3	4	5	6	7
	Օդափոխություն/вентиляция					
1	Կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=250մշ/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг	լրա կազմ	к-т	3	6 ամիս	***<u>Mitsubishi, PEAD-RP50JA(L)Q, կանալային օդափոխիչի տեղադրում/</u>*** Канальный вентилятор Q=250մշ/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг
2	Կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=250մշ/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг	լրա կազմ	к-т	3	6 ամիս	***<u>Mitsubishi, PEAD-RP50JA(L)Q, կանալային օդափոխիչի տեղադրում/</u>***

						Канальный вентилятор Q=250мш/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг
3	Կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=320мш/ч, N=0.085квт, n=2600об/мин, G=3.75кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	***Mitsubishi, PEAD-RP50JA(L)Q, կանալային օդափոխիչի տեղադրում/*** Канальный вентилятор Q=320мш/ч, N=0.085квт, n=2600об/мин, G=3.75кг
4	Կանալային օդափոխիչի տեղադրում/Канальный вентилятор Q=250мш/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	***Mitsubishi, PEAD-RP50JA(L)Q, կանալային օդափոխիչի տեղադրում/*** /Канальный вентилятор Q=250мш/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг
5	Կանալային օդափոխիչի տեղադրում/ Канальный вентилятор Q=1080мш/ч, N=0.2квт, n=2500об/мин, G=5.7кг, L=205мм	լրա կազմ	к-т	1	6 ամիս	***Mitsubishi, PEAD-RP50JA(L)Q, կանալային օդափոխիչի տեղադրում/*** Канальный вентилятор Q=1080мш/ч, N=0.2квт, n=2500об/мин, G=5.7кг, L=205мм
6	Կանալային օդափոխիչի տեղադրում Канальный вентилятор Q=560мш/ч, N=0.175կվտ, n=2950об/мин, G=4.6к	լրա կազմ	к-т	1	6 ամիս	***Mitsubishi, PEAD-RP50JA(L)Q, կանալային օդափոխիչի տեղադրում/*** Канальный вентилятор Q=560мш/ч, N=0.175կվ տ , n=2950об/мин, G=4.6к
7	Կանալային օդափոխիչի տեղադրում Канальный вентилятор Q=250мш/ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	***Mitsubishi, PEAD-RP50JA(L)Q, կանալային օդափոխիչի տեղադրում/*** Канальный вентилятор Q=250 м ш/ ч, N=0.095квт, n=2500об/мин, G=3.8кг
8	Կանալային օդափոխիչի տեղադրում Канальный вентилятор Q=560мш/ч, N=0.175կվտ, n=2950об/мин, G=4.6кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	***Mitsubishi, PEAD-RP50JA(L)Q, կանալային օդափոխիչի տեղադրում/*** Канальный вентилятор Q=560 м ш/ ч, N=0.175 կվ տ , n=2950об/мин, G=4.6кг
9	Կանալային օդափոխիչի տեղադրում Осевой вентилятор Q=95мчш/, N=0.03квт, n=2940об/мин, G=1.0кг	լրա կազմ	к-т	1	6 ամիս	***Mitsubishi, PEAD-RP50JA(L)Q, կանալային օդափոխիչի տեղադրում/*** Осевой вентилятор Q=95мч ш/, N=0.03квт, n=2940об/мин, G=1.0кг

10	Օդի ներածման արտածման ռեկուպացիոն սարքավորում Q= 80/40m3/ժ N=25, n=2300պտ/ր Приточно-вытажная рекуперационная установка Q=80/40մա/ժ; N=25վտ; n=2300պտ/ր	լրա կազմ	կ-ա	40	2	Vents VKO150 Օդի ներածման արտածման ռեկուպացիոն սարքավորում Q=80/40m3/ ժ N=25, n=2300 պտ/ր Приточно-вытажная рекуперационная установка Q=80/40 մա/ժ; N=25 վտ; n=2300 պտ/ր
11	Օդի ներածման արտածման ռեկուպացիոն սարքավորում Q= 1030/40m3/ժ N=3.7, n=2720պտ/ր Приточно-вытяжная рекуперационная установка Q=1030մա/ч; N=3.7квт; n=2720об/мин	լրա կազմ	կ-ա	1	2	Vents VKO125, Օդի ներածման արտածման ռեկուպացիոն սարքավորում Q= 1030/40m3/ ժ N=3.7, n=2720պտ/ր Приточно-вытяжная рекуперационная установка Q=1030 մա/ч; N=3.7квт; n=2720об/мин
	Տեսադիտարկման համակարգ/видеонаблюдение					
12	Թվային տեսաձայնագրիչ / Цифровой видеорегистратор H264 High Profile Compression, Full HD 1080p, Real time Recording # Playback, 480fps at 1080p# 960 fps at 960 H	լրա կազմ	կ-ա	1	1	DS -7116HQHI -K1 NIKVISION Թվային տեսաձայնագրիչ/ Цифровой видеорегистратор H264 High Profile Compression, Full HD 1080p, Real time Recording # Playback, 480fps at 1080p# 960 fps at 960 H
13	Գունավոր տեսախցիկ 4ՄՊք,3.6մմ, ներքին տեղադրման,գիշեր-ցերեկ / Цветная камера 4 МПиксел, 3.6мм, вн. Установки	լրա կազմ	կ-ա	2	1	DS-2CE56D0T-IRP NIKVISION Գունավոր տեսախցիկ 4 ՄՊք, 3.6 մմ, ներքին տեղադրման, գիշեր -ցերեկ /Цветная камера 4 МПиксел, 3.6мм, вн. Установки 14 Գունավոր տես ախցիկ 4 ՄՊք, 3.6 մմ, 40 մ, IP67, արտաքին տեղադրման/ Цветная камера 4 МПиксел, 3.6мм, 40 м, IP67, наружной установки, день-ночь լրակազմ կ-ա 12 1
14	Գունավոր տեսախցիկ 4ՄՊք,3.6մմ,40մ,IP67, արտաքին տեղադրման / Цветная камера 4 МПиксел, 3.6мм, 40м, IP67, наружной установки, день-ночь	լրա կազմ	կ-ա	12	1	DS-2CE56D0T -IRP NIKVISION , Գունավոր տեսախցիկ 4 ՄՊք, 3.6 մմ, 40 մ, IP67, արտաքին տեղադրման/Цветная камера 4 МПиксел, 3.6мм, 40 м, IP67, наружной установки,

						день -ночь
	Կաթսաներ/котлы					
15	Կոնդենսացիոն պատի գազի կաթսաի տեղադրում/ Конденсационные настенные котлы W=40.0Квт	լրա կազմ	к-т	2	1	Gassero, Wallcon Կոնդենսացիոն պատի գազի կաթսայի տեղադրում/ Конденсационные настенные котлы W=40.0Квт
16	Շրջանառության պոմպ Q=10մա/ժ H=14մ /Циркуляционный насос Q=10.0кб.м/ч; H=12.0м	լրա կազմ	к-т	2	1	DPH 60/250-40T Pedrollo Շրջանառության պոմպ Q=10 մա/ժ H=14մ/ Циркуляционный насос Q=10.0кб . м / ч; H=12.0 м
	Ֆոտովոլտային պանելների համակարգ/солнечные фото влольтовые панели					
17	Ներցանցային փոխակերպիչ, 2 ԱՀԿՈՒ-ով (MPPT), 2/2 գծային մուտքով, ՍՓ.ԱՆՎ~380/220 Վ, ՍՀ.ԱՌ-1080 Վ, 20 կՎտ	լրա կազմ	к-т	1	5	Solaron, Inventor Goodwe GW3000-NS Ներցանցային փոխակերպիչ, 2 ԱՀԿՈՒ-ով (MPPT), 2/2 գծային մուտքով, ՍՓ. ԱՆՎ~380/220 Վ,Ս Հ. ԱՌ -1080Վ, 20կՎտ
18	Միաբյուրեղային (perc տեխնոլոգիա) ֆոտովոլտային վահանակ, 120(60x2) կեսբջիջ, 5 հաղորդաձող (BB), 345 Վտ -0,+ 3%, 1684x1002x30	լրա կազմ	к-т	60	10	Solaron, Միաբյուրեղային (perc տեխնոլոգիա) ֆոտով ոլտային վահանակ, 120 (60x2) կեսբջիջ, 5 հաղորդաձող (BB), 345 Վտ -0,+ 3%, 1684x1002x30
	Կահույք/ инвентарь					
19	Էլ. սալոջախ 600x600x850 մմ, N = 9,2 կՎտ, 380 Վ Плита электрическая 600x600x850 мм, N = 9,2 кВт, 380 В	լրա կազմ	к-т	2	1	Gorenje, E5121WH, Էլ. սալոջախ 600 x600 x850 մմ, N = 9,2 կՎտ , 380 Վ Плита электрическая 600x600 x850 мм, N = 9,2 кВт, 380 В
20	Սառնարանային պահարան 750x700x2010 N=0,32կվտ 220Վ, 650լ. Шкаф холодильный 750x700x2010 N=0,32квт, 220В, 650л.	լրա կազմ	к-т	1	1	LG GR-B650GLPL, Սառնարանային պահարան 750x700x2010 N=0,32կվտ 220Վ, 650լ. Шкаф холодильный 750x700x2010 N=0, 32квт, 220В, 650
21	Լվացքի մեքենա, ավտոմատ, 15,0 կգ., 1400 պտույտ/րոպե Стиральная машина, автомат, 15,0 кг., 1400 об/мин.	լրա կազմ	к-т	2	1	Beko WTV8612XSW, Լվացքի մեքենա, ավտոմատ, 15,0 կգ., 1400 պտույտ/րոպե Стиральная машина, автомат, 15,0 кг., 1400 об/мин

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.11.2020թ. թիվ 2-4 արձանագրության համաձայն՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից շտկումից հետո ներկայացված Հավելված 1.1-ի 1-9-րդ տողերով պահանջվող կանալային օդափոխիչների փոխարեն մասնակիցը ներկայացրել է կանալային օդորակիչների ներքին բլոկ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերության հայտն անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Ինչ վերաբերում է բողոքաբերի կողմից վկայակոչված այն հանգամանքին, որ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքը, ըստ արտադրող ընկերության պաշտոնական կայքի տեղեկատվության, հանդիսանում է կանալային օդափոխիչ, ըստ համապատասխան հղման՝ http:/www.mitsubishielectric.com.ua/pead-rp-jalq.html:, հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 21.12.2020թ. «ԿՈՆՍԷԼ» ՍՊԸ-ին (հանդիսանում է Mitsubishi Electric պաշտոնական ներկայացուցիչը ՀՀ-ում) ուղղված թիվ ԲՔԱ-ԳՆ/2/19150-2020 գրությամբ խնդրել է տալ պարզաբանում՝ հետևյալ հարցերի վերաբերյալ.

1. Արդյո՞ք «Mitsubishi» ապրանքանիշի PEAD-RP50JA(L)Q կոդը թույլ է տալիս եզրակացնել, թե ինչ ապրանքատեսակի մասին է խոսքը:
2. Ի՞նչն է բնորոշում PEAD-RP50JA(L)Q կոդը (մոդել, տեսակ, այլ...):
3. PEAD-RP50JA(L)Q կոդով ապրանքը ի՞նչ ապրանքատեսակ է հանդիսանում:

Ի պատասխան վերը շարադրված գրության՝ «ԿՈՆՍԷԼ» ՍՊԸ-ն 24.12.2020թ. ներկայացված գրությամբ հայտնել է հետևյալը.

«««Mitsubishi» ապրանքանիշի PEAD-RP50JA(L)Q կոդը իրենից ներկայացնում է «Mitsubishi» ապրանքանիշի կանալային օդորակչի ներքին բլոկի մոդել: (Կից ներկայացնում ենք «Mitsubishi» ապրանքանիշի կատալոգի քաղվածքը)»:

Այսպիսով՝ վերոգրյալ իրավական կարգավորումների մեկնաբանության և սույն գործի փաստական հանգամանքների համադրված վերլուծության արդյունքում արձանագրում եմ, որ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ***Հավելված 1.1-ի 1-17-րդ տողերում բացակայել է մոդելի վերաբերյալ տեղեկատվությունը, և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի*** քարտուղարի կողմից 20.11.2020թ. Համակարգի միջոցով անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ պատշաճ

ծանուցվելուց հետո, ***<u>Ընկերության կողմից շտկված Հավելված 1.1-ով ներկայացվել է Mitsubishi, PEAD-RP50JA(L)Q կանալային օդափոխիչի տեղադրում, որը, սակայն, հանդիսանում է «Mitsubishi» ապրանքանիշի կանալային օդորակչի ներքին բլոկի մոդել (համաձայն կոդի՝ PEAD-RP50JA(L)Q), մինչդեռ Ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ով՝ սարքերի և սարքավորումների նկարագրով, սահմանվել է կանալային օդափոխիչի տեղադրում, այսինքն՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված Հավելված 1.1-ը չի համապատասխանել Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, հետևաբար Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:</u>***

Ինչ վերաբերում է Ընկերության այն դիտարկմանը, որով խնդրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին նկատի ունենալ, որ մինչև ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարած «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-20/2» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելը՝ «Կոնսէլ» ՍՊԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի միջև ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն՝ Ընթացակարգի շրջանակներում «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի պահանջի դեպքում մրցույթով նախատեսված կանալային օդափոխիչների տրամադրման վերաբերյալ՝ մրցույթի համապատասխան տեխնիկական պարամետրերով, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ անկախ ձեռք բերված նախնական պայմանավորվածությունների՝ գնահատող հանձնաժողովը գնահատում է միայն Ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի 30.11.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 04.12.2020թ. թիվ 02/16.4/9086-2020 գրությամբ հայտնած դիրքորոշումը, ինչպես նաև «ԿՈՆՍԷԼ» ՍՊԸ-ի 24.12.2020թ. գրությունը՝ գտնում եմ, որ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից 30.11.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**